ըէն. երթալով կը բազմապատկի նոցա դիմաց հեռաւոր Տաւրիոյ գեղեցկութիւնը, կը հալի նոցա սիրտը երբ կը յիշեն որ անդարձ պիտի լինի իրենց պանդխտութիւնն, «ով յիշատակ աղետաւոր և քաղցրիկ»։ Կը նզովեն այն ժամը՝ յորում Թողին զՂրիմ, կ'երդնուն որ անպատճառ վերադառնան ու վայելեն իրենց պապենական այգիներն ու պարտէզները. կը բողոքեն կը պաղատին, այլ լսող չի լինիր։ Քանի մի գերդաստանք ինչպէս Տէօլվէթեանքը կ'անցնին յԵկատերինեսլաւ իրենց կաթոլիկ եղբարց մօտ, և ապա նոցա հետ 'ի միասին կը վերադառնան 'ի Ղրիմ. այլք ոմանք գիշերախառն կ'ուզեն վերադառնալ փախչելով, այլ նոցա առաջ պատ կ'ելնեն Խաղախաց սուինք։ Կամայ և ակամայ կը խոնարհին առ ժամն ճակատագրին անողոք օրինաց։ Յովսէփ սրբազան՝ նոցա թեմական առաջնորդը շատ յորդոր և խրատներ կու տայ, որ Ողորմած կայսրուհւոյն կամացը հնազանդին. մեծահանդէս կ'օրհնէ ըստ գծագրեալ յատակաձևոյն նոր շինուելիք քաղաքին հիմունքը, և հին՝ միանգամայն ցանկալի անուամբ կը կնքէ քաղաքը Նախիջևան կոչելով։ Այս կը լինի 1779 ին, Ղրիմէ ելնելնուն երկրորդ տարին. կ'անցնին ամիսներ, կ'անցնին տարիներ, տապակէզ ամարանց՝ խստաշունչ ձմեռներ կը յաջորդեն, կու գայ գարուն. կը յիշեն գեղացիք իրենց Ղրիմեցի համանուն [1] գեղերն անտառազարդ բլուր-

1 Նախիջևանցի գեղացիք իրենց գեղերուն թաթարահնչիւն անուններ տուած են, 'ի յիշատակ իրենց հին բնակութեան Զալթըր (Օրդալան), Մեծ Սալա, Սուտան – Սալա, Թոփաի և Նիսվիթա. այս վերջինս թաթարահնչիւն չէ, և Ղրիմու մէջ լսած եմ մինչև ցայսօր այդ անունով գեղ։